# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Միջոցառման անվանումը | Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերը | Արդյունքը (հակիրճ բովանդակությունը) | Կատարողը | Համակատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ** | | | | | |
| 1. Հաշվետվությունների նոր մեխանիզմների ներդրում | Ներքին իրավական ակտի նախագծի մշակում, հաստատման ներկայացում | Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հաստատվել են հաշվետվությունների ձևեր և ներկայացման կարգ (2020 թվականի փետրվար 3-ի թիվ 108-Ա հրաման) | կառուցվածքային ստորաբաժանումներ | ԻԱՓՎ | իրականացվել է |
| 2. ՀՀ ԱԱՏՄ գործունեության համար անհրաժեշտ վարչարարության օրինակելի ձևաթղթերի հաստատում | Ներքին իրավական ակտի նախագծի մշակում, հաստատման ներկայացում | Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հաստատվել են վարչարարության օրինակելի ձևաթղթեր (2020 թվականի փետրվար 5-ի թիվ 119-Ա հրաման) | ԻԱՓՎ | կառուցվածքային ստորաբաժանումներ | իրականացվել է |
| 3. ՀՀ ԱԱՏՄ ստուգումների ուղեցույցի նախագծի ներկայացում ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի հաստատմանը | Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագծի մշակում | Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագիծը հաստատման ներկայացում (խորհրդի կողմից հաստատվել է ուղեցույցը) | ԻԱՓՎ | կառուցվածքային ստորաբաժանումներ | իրականացվել է |
| 4. ՀՀ ԱԱՏՄ քաղաքացիական | Քաղաքացիական ծառայության պաշտոնների հարցարանների | Տեսչական մարմնի քաղաքացիական աշխատանք կատարողների | ԻԱՓՎ | | իրականացվել է |


0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| պաշտոնների փոխարինում քաղաքացիական ծառայության պաշտոններով | և նկարագրությունների մշակում, անձնագրերի հաստատում, անվանացանկի և հաստիքացուցակի փոփոխություն և հաստատում | պաշտոնները նախատեսվել են քաղաքացիական ծառայության անվանացանկում՝ դառնալով 264 քաղաքացիական ծառայության պաշտոն: (Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ԱԿ 1334-Ա և ԱԿ 1335-Ա հրամաններ) | | | |
| 5. ՀՀ ԱԱՏՄ թափուր հաստիքների համալրում | Տեսչական մարմնում աշխատանքի ընդունման գործընթացի կազմակերպում | Թափուր հաստիքները մասնակի համալրվեն են, ընթանում են համալրման աշխատանքներ | ԻԱՓՎ | | շարունակական |
| 6. Տեսչական մարմնի ծառայողների վերապատրաստման ռազմավարական տարեկան ծրագրի մշակում և ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդին ներկայացում | Աշխատանքային կարգով ներկայացվել են առաջարկներ վերապատրաստման կարիքների վերաբերյալ | Տեսչական մարմնի աշխատողների վերապատրասման վերաբերյալ հուշագրեր են ստորագրվել Հայաստանի Ազգային Ագրարային համալսարանի և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ | կառուցվածքային ստորաբաժանումներ | ԻԱՓՎ | իրականացվել է |
| 7. Ստուգումների անցկացման համար դասընթացների իրականացում | Մշակվել է դասընթացի նյութը | Տեսչական մարմնի տարածքային կենտրոններում կազմակերպվել և անցկացվել են դասընթացներ | ԻԱՓՎ | | իրականացվել է |
| 8. ՀՀ ԱԱՏՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատմանը ներկայացում | Նախագծերի մշակում, ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | Տեսչական մարմնի ստորաբաժանումների կանոնադրությունների առկայություն՝ գործառույթների հստակեցում (Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 20-ի թիվ 152-Ա հրաման) | ԻԱՓՎ | կառուցվածքային ստորաբաժանումներ | իրականացվել է |
| 9. ՀՀ ԱԱՏՄ վերահսկողության տեսուչների համար | Կազմվել և ներկայացվել է վարչարարություն իրականացնելու համար | Ստուգումների և վարչական վարույթների իրականացման ընթացքում տեսուչների | ոլորտային կառուցվածքային | | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| վարչարարություն իրականացնելու համար պահանջվող անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածության ապահովում | պահանջվող անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը | անվտանգության ապահովում, վերցվող իրերի և այլ պարագաների կանոնագարում և պատշաճություն | ստորաբաժանումներ | | |
| 10. ՀՀ ԱԱՏՄ տեսուչների համար նախատեսվող վարքագծի կանոնների նախագծի ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ղեկավարի հաստատմանը | Մշակվել և ներքին շրջանառության է ներկայացվել Տեսչական մարմնի աշխատողների վարքագծի կանոնների վերաբերյալ Տեսչական մարմնի ղեկավարի ներքին իրավական ակտի նախագիծ | Տեսչական մարմնի ղեկավարի աշխատողների վարքագծի կանոնները հաստատելու մասին հրամանի նախագիծը ներկայացվել է հաստատման | հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ | ԻԱՓՎ | իրականացվել է |
| 11. ՀՀ ԱԱՏՄ-ի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում տեղակայում | Գնահատվել և վերլուծվել են Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների պահանջարկները, Տեսչական մարմնին գույք ամրացնելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծի մշակում | ՀՀ կառավարության Տեսչական մարմնին գույք ամրացնելու մասին որոշումների նախագծերը հաստատման ներկայացում | Տեսչական մարմնի ղեկավար | ԻԱՓՎ | իրականացվել է |
| 12. Ստուգումների և վարչական վարույթների իրականացման էլեկտրոնային ծրագրի ապահովում՝ աշխատողների առողջության և անվտանգության ապահովման վարչության կողմից կիրառվող | 2020թ. մարտ ամսից ընթանում են համակարգչային ծրագրի կարգավորման և լրամշակման աշխատանքներ: Միջոցառման կատարման ավարտը նախատեսված է Տեսչական մարմնի 2021թ. գործունեության ծրագրի հավելված 1-ի 11-րդ կետով | Ստուգումների և վարչական վարույթների իրականացման արդյունավետության բարձրացում: Վերահսկողության գործընթացի կանխատեսելիության և թափանցիկության ապահովում | ԱԱՊՎ | | շարունակական |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| վերահսկողության ստուգաթերթերի թվայնացում, բազայի ներդրում | | | | | |
| 13. Բնակչության համար ՀՀ ԱԱՏՄ-ի հասանելիության մեխանիզմների ներդրում | Լիարժեք սկսել է գործել՝ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը www.hlib.am հասցեով, գործարկվել է նոր թեժ գիծը՝ 8107 հեռախոսահամարը: | Տեսչական մարմնի գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով, գործել՝ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը www.hlib.am հասցեով, դիմում-բողոքներին արձագանքելու և ընթացք տալու, Տեսչական մարմնի կապը հանրության հետ ավելի արագ և արդյունավետ կազմակերպելու նպատակով գործարկվել է նոր թեժ գիծը՝ 8107 հեռախոսահամարով: | ԻԽՀՏ բաժին | կառուցվածքային ստորաբաժանումներ | իրականացվել է |
| 14. Միջազգային համագործակցության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համագործակցության կապերի հաստատում և հետագա ընթացքի ապահովում | Ուսումնասիրվել են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների հիգիենիկ և հակահամաճարակային հսկողություն և վերահսկողություն իրականացնող կառույցների կառուցվածքը և գործառույթները, ինչպես նաև այդ երկրների հակահամաճարակային աշխատանքների ռազմավարությունն ու մարտավարությունը | ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի և Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների հետ կազմակերպվել են հանդիպումներ Տեսչական մարմնի ղեկավարի, հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչության պետի հետ, որի ժամանակ քննարկվել են COVID-19 վարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումները և նախատեսվող աշխատանքները: Միևնույն ժամանակ, Տեսչական մարմնի «Զվարթնոց» Մ/Օ ՍԲՀԿ-ի պետի հետ քննարկվել են սահմանային բժշկասանիտարական հսկողության վերաբերյալ ԱՀԿ մոտեցումները, ներկայացվել են Տեսչական մարմնի «Զվարթնոց» Մ/Օ ՍԲՀԿ-ի կատարած աշխատանքները, կատարվել են | ՀՍՀՎ | | իրականացվել է |

0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | համեմատություններ և վերլուծություն: Վերլուծության արդյունքում կատարվել են հետևություններ, և ձեռնարկվել են քայլեր, որոնք նպաստել են Տեսչական մարմնի «Զվարթնոց» Մ/Օ ՍԲՀԿ-ի աշխատանքների շարունակական լավացմանը, ինչն էլ արձանագրվել է ԱՀԿ ներկայացուցիչների կողմից | | | |
| 15. Փորձագիտական կենտրոնների կողմից տրված եզրակացությունների վերլուծություն, խնդիրների վերհանման և կատարելագործման մեխանիզմների ներդրում | Ուսումնասիրվել են փորձագիտական եզրակացությունները իրականացվել է վերլուծություն, խնդիրների վերհանում, ինչպես նաև տեղի է ունեցել համատեղ քննարկում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության ներկայացուցիչների միջև:<br><br>Խնդիրների ամբողջական լուծման նպատակով ներկայումս համատեղ քննարկումները շարունակվում են | Դեղերի շրջանառության ոլորտի հետ կապված եզրակացությունների վերաբերյալ դրանք ներկայացնող կազմակերպության հետ քննարկում է իրականացվել: Սանիտարահիգիենիկ վերահսկողության ոլորտում խնդիր է առաջացել եզրակացությանը կից ներկայացվող արձանագրության թերի լրացման հետ կապված, որի վերաբերյալ գրություն է ուղարկվել եզրակացությունը կազմող փորձագիտական կենտրոն: Հայտարարվել է մրցույթ լաբորատոր հետազոտություններ իրականացնելու այլ լաբորատորիաների հետ պայմանագիր կնքելու նպատակով: Մրցույթում հաղթող ճանաչված լաբորատորիայի հետ կնքվել է պայմանագիր | վարչություններ և տարածքային կենտրոններ | ԻԱՓՎ | իրականացվել է |
| 16. ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից ստուգումների ընթացքում ծագած խնդիրների, ստուգաթերթերի լրացման և դրանցում առկա հարցերի կարգավորման | Տեսչական մարմնի ստորաբաժանումների կողմից ներկայացվել են ստուգումների ընթացքում ծագած խնդիրները, աշխատանքային կարգով քննարկվել են դրանց լուծման | ZOOM հարթակում հարց ու պատասխանի տեսքով կազմակերպվել են սեմինար-քննարկումներ, ԻԱՓՎ-ի կողմից մշակվել է ստուգաթերթերի լրացման մեթոդական ուղեցույց, որը ներկայացվել է ստուգում | ԻԱՓՎ | ոլորտային ստորաբաժանումներ | իրականացվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| անհրաժեշտության վերաբերյալ կարգավորող մեխանիզմների նախագծի ներայացում ՀՀ ԱԱՏՄ ղեկավարի հաստատմանը | ուղիները | իրականացվող ստորաբաժանումներին | | | |
| Օրենսդրական առաջարկություններ | | | | | |
| 18. «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Ուսումնասիրվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի ոչ հստակ օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև Տեսչական մարմնի կողմից հսկիչ գնումների իրականացման հսկողական գործառույթ վերապահելու համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների ներդրման անհրաժեշտությունը, մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթը | Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքի նախագծերի փաթեթը | ԻԱՓՎ | կառուցվածքային ստորաբաժանումներ | իրականացվել է |
| 19. «Տեսչական մարմնի հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման 6 նախագծի մշակում և նախագծի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի | Ծրագրի 18-րդ կետում նշված միջոցառմանը հաջորդող գործողություն | «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքի նախագծերով նախատեսվել է Տեսչական մարմնին վերապահել հսկիչ գնումների իրականացման լիազորություն: Նախագիծը գտնվում է շրջանառության փուլում: Համապատասխան | ԻԱՓՎ | հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն | իրականացվել է |


0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | | կառավարության որոշման ընդունումը հնարավոր է միայն շրջանառվող նախագծի ընդունման և կիրարկման միջոցառումներում ընդգրված լինելու պարագայում | | | |
| 20. «Դեղերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկների ներկայացում, օրենքի նախագծի մշակում և նախագծի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Նախագծի մշակման աշխատանքների իրականացում | Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Դեղերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ | դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն | կառուցվածքային ստորաբաժանումներ ԻԱՓՎ | իրականացվել է |
| 21. ԱԱՏՄ-ի ներգրավում որպես «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի շահառու | Գործընթացն ապահովելու նպատակով իրականացվել են կազմակերպչական աշխատանքներ: Նշված գործընթացն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշակել մի շարք իրավական ակտեր, որոնք իրականացնելու համար նախատեսվել է կազմակերպել քննարկումներ ՊԵԿ-ի հետ, սակայն Հայաստանում համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված գործընթացը հետաձգվել է: | | ԻԱՓՎ | դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն<br>հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ | շարունակական |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Նախատեսվում է վերսկսել գործընթացը: | | | | |
| 27. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Մշակվել է նախագիծը, դրվել է ներքին շրջանառության, ստացվել և ամփոփվել են առաջարկությունները | Նախագծի ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Լիցենզավորման պարտադիր պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորության վերապահման նպատակով համապատասխան լրացում է կատարվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում (48-րդ հոդված), որի հիման վրա լրացումներ են կատարվել ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման մեջ (ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 3-ի թիվ 768-Լ որոշման) | Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողու թյան վարչություն | ԻԱՓՎ | իրականացվել է |
| 28. ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների ստացման լիազորություն վերապահելու մասին օրենսդրական փաթեթի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Ներկայացվել, քննարկվել և ամփոփվել են առաջարկություններ՝ կապված Տեսչական մարմնի կողմից անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների ստացման հետ | 2019 թվականի դեկտեմբերին Առողջապահության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի վերաբերյալ Տեսչական մարմնի կողմից ներկայացվել են մի շարք առաջարկություններ, այդ թվում՝ Տեսչական մարմնի կողմից «Հայաստանի Հանրապետության բնակչության | կառուցվածքա յին ստորաբաժան ումներ | ԻԱՓՎ | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իր լիազորությունների արդյունավետ իրականացման և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55–րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանումն ապահովելու նպատակով առաջարկվել է Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Պարտադիր բժշկական զննության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Տեսչական մարմնին տրամադրվում է տեղեկատվություն (այդ թվում՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տարեթիվ, աշխատանքի վայր) այն անձանց առողջական վիճակի վերաբերյալ, ովքեր չեն ենթարկվել նախնական և պարբերական բժշկական զննության, ինչպես նաև այն անձանց, ում մոտ ախտորոշվել է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հիվանդություններից որևէ մեկը», որն ըստ էության իրավական հիմք կհանդիսանա համապատասխան մարմիններից տեղեկատվություն (այդ թվում՝ անձնական տվյալներ պարունակող) ստանալու և օրենքով Տեսչական մարմնին վերապահված լիազորություններն իրականացնելու համար,<br>նշված նախագիծը Հայաստանի Հանրապետությունում Նոր | | | |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կորոնավիրուսային հիվանդության տարածման հետևանքով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված դեռևս չի ընդունվել, անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների ստացման իրավական կարգավորումներ են սահմանվել նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-268-Ն օրենքով ( ուժի մեջ է մտել 30.05.2020) | | | |
| 29. ՀՀ ԱԱՏՄ ՍԲՀԿ-ների օրենսդրությամբ լիազորությունների սահմանում | Ներկայացվել են առաջարկություններ | Ներկայացվել են ՀՀ կառավարության 2012 թվականի N 777-Ն որոշման և ՀՀ կառավարության 2011 թվականի N 702-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու առաջարկություններ, որը հաստատվել է 2020 թվականի հուլիսի 23-ի N 1222-Ն ՀՀ կառավարության որոշմամբ:<br>Մշակվել և հաստատվել է ՍԲՀԿ-երի կանոնադրության նախագիծը:<br>Կապված կորոնավիրուսային վարակի տարածման հետ ՀՀ օրենսդրությանը համահունչ բազմաթիվ հրահանգչական նամակով կանոնակարգվել է ՍԲՀԿ-ների իրավիճակային աշխատանքը:ՀՀ կառավարության 2020թ.-ի մարտի 16-ի թիվ 298-Ն և 2020թ.-ի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշումների մշակման փուլում ներկայացվել են առաջարկություններ: Արտակարգ իրավիճակի և կարանտինի ընթացքում ՍԲՀԿ-ների ընդհանուր աշխատանքը կանոնակարգված է եղել | ՀՍՀՎ | ՍԲՀԿ<br>ԻԱՓՎ | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 30. ՀՀ սանիտարական օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրենսդրական փաթեթի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Առաջարկությունների ներկայացում, ամփոփում և ներկայացում: ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25- N 876 հրամանով հաստատված ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» սանիտարական նորմերում և կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծը, ինչպես նաև առաջարկվել է մշակել նորմատիվ իրավական ակտեր, որով կսահմանվեն սանիտարահակահամաճարակային ռեժիմին ներկայացվող պահանջները՝ առաջնային բժշկական օգնության, մասնագիտացված բժշկական օգնության (մասնավորապես՝ վարակիչ հիվանդությունների, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության, ընդհանուր վիրաբուժական, | ՀՀ սանիտարական օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկություններ է ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ հատկապես համավարակով պայմանավորված: Միևնույն ժամանակ, այլ մարմինների կողմից Տեսչական մարմին ներկայացված նախագծերի վերաբերյալ ներկայացվել են կարծիքներ նշված ոլորտը կարգավորվելու նպատակով | ՀՍՀՎ<br><br>ՍԲՀԿ | ԻԱՓՎ | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | գինեկոլոգիական, վերականդանացման, ներքին բժշկական (ընդհանուր թերապևտիկ), հոգեբուժական, ֆիզիոթեռապևտիկ, վերականգնողական), նեղ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում (ուռուցքաբանական, կոսմետոլոգիական, հեմոդիալիզային) տեսակներ իրականացնող կազմակերպությունների համար: Միևնույն ժամանակ Տեսչական մարմնի հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչության կողմից ներկայացվել են ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 01-ի N 21-Ն հրամանով հաստատված «Ավտոբենզալցակայաններին, ավտոգազալիցքավորման ճնշակայաններին և ավտոգազալիցքավորման կայաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոններում և նորմերում, ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի N 06-Ն հրամանով հաստատված | | | | |


0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոններում և նորմերում լրացումներ փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծերը: Առաջարկություններ և դիտողություններ են ներկայացվել նաև «Խաղահրապարակներին և խաղասարքերին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.2.002-20 սանիտարական կանոնների պահանջների վերաբերյալ: ՀՀ սանիտարական օրենսդրության կատարելագործման նպատակով պարբերաբար ներկայացվել են առաջարկություններ ՀՀ Պարետի որոշումների նախագծերի, ՀՀ կառավարության որոշումների նախագծերի, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում գործունեություն ծավալող կառույցների փոխգործակցության նախագծերի վերաբերյալ | | | | |
| 31.«Շինարարություն (F էֆ)» ոլորտում աշխատողների | Պատրաստվել և Տեսչական մարմինների աշխատանքների | Ստուգաթերթի առակայություն | ԱԱՊՎ | ԻԱՓՎ | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | համակարգման գրասենյակ է ներկայացվել Շինարարության և Մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների վերաբերյալ ստուգաթերթերի նախագծերը | | | | |
| 32. Տեսչական մարմնի կողմից թույլտվությունների նոր մեխանիզմների ներդրում | Կատարվել են նախապատրաստական աշխատանքներ: Ծրագրի կետով նախատեսված գործառույթը նպատակահարմար է իրականացնել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում համապատասխան փոփոխություն կատարելուց հետո: Գործառույթը ներառված է Տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության ծրագրում | | ՀՍՀՎ | Տարածքային կենտրոննե | շարունական |
| 36. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում | Մշակվել և ներկայացվել են «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ և | Տեսչական մարմնի աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի հարաբերությունները | ԱԱՊՎ | ԻԱՓՎ | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | փոփոխություն կատարելու և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր | կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցներ սահմանելու իրավասության վերապահում | | | |
| 37. ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ | Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հիմնական կանոններն ու նորմերը սահմանելու լիազորությունը ՀՀ կառավարությանը վերապահում | ԱԱՊՎ | ԻԱՓՎ | իրականացվել է |
| 38. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների | Առաջարկությունների ներկայացում, ամփոփում և ներկայացում | Աշխատանքային կարգով առաջարկություն է ներկայացվել Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ՝ վարչական իրավախախտումների տույժերը վերանայելու վերաբերյալ: Տեսչական մարմնում գործի քննություններն իրականացնող իրավասու անձի մասով փոփոխություն իրականացնելու կարիք չի եղել. այն կարգավորված է | կառուցվածքային ստորաբաժանումներ | ԻԱՓՎ | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| համակարգման գրասենյակ | | | | | |
| 39. ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից հարուցված վարչական վարույթների ընթացքում պատշաճ ծանուցումների հրապարակային գործընթացի կարգավորումներն ապահովող առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթը | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | կառուցվածքային ստորաբաժանումներ | ԻԱՓՎ | իրականացվել է |
| 17. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28 N 202-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկության ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ<br>22. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28 N 164-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու | ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրի 17-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ և 26-րդ կետերով նախատեսված միջոցառումները ամբողջությամբ չեն կատարվել: Կատարվել են համապատասխան իրավական ակտերի նախագծերի նախապատրաստական աշխատանքները և գտնվում են | | | | իրականացվել է մասամբ |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | տարբեր փուլերում: Վերջնական արդյունք չի արձանագրվել օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, մասնավորապես՝ պայմանավորված է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշումներով երկրում հայտարարված արտակարգ և ռազմական դրությունների ընթացքում դեղերի շրջանառության վերահսկողության վարչության գերծանրաբեռնվածությամբ: Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումներին Տեսչական մարմնի դեղերի շրջանառության վերահսկողության վարչության ներգրավվածությամբ և ծանրաբեռնվածությամբ: | | | | |
| 23. ՀՀ կառավարության 2019 թվականի N 1080-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | | | | | |
| 24. ՀՀ կառավարության 2013 թվականի N 05-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | | | | | |
| 25. ՀՀ կառավարության 2018 թվականի N 1256-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի | | | | | |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | | | | | |
| 26. ՀՀ կառավարության 2010 թվականի N 17-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | | | | | |
| 33. ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի N 458-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | միջոցառումները ամբողջությամբ չեն կատարվել: Կատարվել են համապատասխան իրավական ակտերի նախագծերի նախապատրաստական աշխատանքները և գտնվում են տարբեր փուլերում: Վերջնական արդյունք չի արձանագրվել օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, մասնավորապես՝ ՀՀ կորոնավիրուսային | | ԱԱՊՎ | | իրականացվել է մասամբ |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 34. Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հիմնական կանոններն ու նորմերը սահմանող ՀՀ կառավարության որոշման առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | հիվանդությամբ պայմանավորված արտակարգ դրություն սահմանելու և դրա հետևանքով Վարչության աշխատակիցների կողմից ՀՀ պարետի որոշման պահանջները ստուգելու նպատակով մշտադիտարկման աշխատանքներում ընդգրկվելու և աշխատանքները հեռավար կազմակերպելու հետևանքով: | | | | |
| 35. «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողների պարտադիր բժշկական զննությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Միջոցառումը տեղափոխվել է Տեսչական մարմնի 2021թ. գործունեության ծրագրի հավելված 1-ի «Օրենսդրական ակտեր» միջոցառումների 18-րդ կետ | | ԱԱՊՎ | ԻԱՓՎ | չի իրականացվել |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման 2020 թվականի միջոցառումներ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.ՀՀ ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում գործող տնտեսավարողներին իրազեկումների կազմակերպում՝ վերահսկողության շրջանակներում կիրառվող ստուգաթերթերի վերաբերյալ (ստուգաթերթերի հրապարակում պաշտոնական կայքում և ֆեյբուքյան էջում) | Կառավարության կողմից հաստատված ստուգաթերթերի մասին իրազեկման նյութերը հրապարակվել են Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում | Տնտեսավարողների գիտելիքների կատարելագործում | ԻԽՀՏ | ոլորտային վարչություններ, տարածքային ստորաբաժանումներ | իրականացվել է |
| 2.Պաշտոնական կայքէջի տեղեկատվական շարունակական սպասարկում | Տեսչական մարմնի ստորաբաժանումների և տարածքային կենտրոնների աշխատանքի մասին հրապարակումները տեղադրվել են պաշտոնական կայքէջում:<br>2020 թվականի ընթացքում կայքէջում եղել է 600-ից ավելի հրապարակում | Տեսչական մարմնի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովում, տնտեսավարող սուբյեկտներին և հանրությանը իրազեկում | ԻԽՀՏ | կառուցվածքային ստորաբաժանումներ | իրականացվել է |
| 3.«Թեժ գիծ» ծառայության կատարելագործում, փոքր հեռախոսակայանի (Mini ATS) գործարկում | Տարեսկզբին գործարկվել է «Թեժ գիծ» ծառայության քառանիշ 8107 համարը, միաժամանակ շարունակում է գործել նաև 010650305 | Տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ստացված բողոքներին, բարձրացված խնդիրներին արագ արձագանքում, խորհրդատվության և հավաստի | ԻԽՀՏ | | իրականացվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հեռախոսահամարը: Մարտ ամսից «Թեժ գիծ» ծառայությունը ժամանակավորապես գործել է շուրջօրյա: | տեղեկատվության տրամադրման ապահովում | | | |
| 4.Տեսչական մարմնի տարբերանշանի փակցնում դեղատների վաճառասրահների դիմապակուն | 2020 թվականի փետրվար ամսին մշակվել է տեղեկատվական թերթիկ՝ Տեսչական մարմնի տարբերանշանով: Եղել է հանդիպում համապատասխան տնտեսավարողների հետ՝ համաձայնեցնելու նպատակով, սակայն արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ աշխատանքները հետաձգվել են: Մինչ այս պահը թերթիկների փակցման գործընթացը շարունակվում է | Հանրության շրջանում Տեսչական մարմնի ճանաչելիության բարձրացում | ԻԽՀՏ | | իրականացվել է |
| 5.Տեսչական մարմնի գործունեությունը լուսաբանող սոցիալական հոլովակների պատրաստում | Տեսչական մարմնի գործառույթների մասին նկարահանվել և հրապարակվել են 300-ից ավելի տեսանյութեր: Ծավալը հնարավոր է եղել ապահովել ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի, Հ1-ի և | Հանրության և տնտեսավարող սուբյեկտների շրջանում Տեսչական մարմնի ճանաչելիության բարձրացում | ԻԽՀՏ | | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ աշխատանքի արդյունքում: Տեսանյութերը տեղադրվել են Տեսչական մարմնի կայքում, ֆեյսբուքյան էջում, և Հայկական միասնական տեղեկատվական կենտրոնի ֆեյսբուքյան էջում: Կազմակերպվել են նաև ուղիղ եթերներ | | | | |
| 6.Տեսչական մարմնի կողմից իրականացված աշխատանքների պարբերաբար լուսաբանում ԶԼՄ-ների միջոցով | Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով իրականացվել է 900-ից ավելի հրապարակում: Բավականին բարձր է եղել նաև տարբեր ԶԼՄ-ների կողմից Տեսչական մարմնի գործունեության լուսաբանումը, մասնավորապես՝ shantnews.am armtims.com, nt.am armenpress.am, azatutyun.am, «Ցայգ» ՀԸ, 1lurer.am, Հանրային ռադիո և այլ: Իրականացվել են նաև ուղիղ եթերներ մշտադիտարկումների և ստուգայցերի ընթացքում | Տեսչական մարմնի հաշվետվողականության ապահովում | ԻԽՀՏ | կառուցվածքային ստորաբաժանումներ | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7.Սոցիալական հոլովակների պատրաստում սեզոնային վարակիչ հիվանդությունների վերաբերյալ | Կորոնավիրուսով պայմանավորված հիմնականում իրականացվել է այդ վարակի կանխարգելմանն ուղղված իրազեկման լայնածավալ աշխատանք տարբեր հաղորդումների միջոցով | Հանրության իրազեկվածության՝ հիգիենիկ գիտելիքների բարձրացում, վարակիչ հիվանդությունների կանխարգելում | ՀԱՀՎ | ԻԽՀՏ | իրականացվել է |
| 8.Վարակիչ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ բուկլետների թողարկում և տրամադրում՝ երեխաների համար կրթական կազմակերպությունների, իսկ չափահաս բնակչության համար՝ դեղատների և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների միջոցով | Պատրաստվել, թողարկվել և տնտեսավարողներին է տրամադրվել բուկլետներ վարակիչ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ:<br><br>Հանրակրթական և նախակրթական հաստատություններին տրամադրվել են իրազեկման թերթիկներ Covid-անվտանգության սահմանված նորմերի ներառմամբ | Հանրության իրազեկվածության՝ հիգիենիկ գիտելիքների բարձրացում, վարակիչ հիվանդությունների կանխարգելում | ՀԱՀՎ | ԻԽՀՏ | իրականացվել է |
| 9.Սննդային գործոնով պայմանավորված թունավորումների կանխարգելման վերաբերյալ իրազեկում | Տեսչական մարմնի ֆեյսբուքյան էջով և պաշտոնական կայքով հրապարակվել, ինչպես նաև ԶԼՄ-ներով տարածվել է սննդային գործոնով պայմանավորված թունավորումների | Թունավորումների կանխարգելում | ՀԱՀՎ | ԻԽՀՏ | իրականացվել է |

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA
0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կանխարգելման վերաբերյալ իրազեկման նյութ | | | | |
| 10.Դասընթացների կազմակերպում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար | Արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ դասընթացները փոխարինվել են իրազեկման հեռավար աշխատանքներով | Բնակչության առողջության վրա աղմուկի բացասական ազդեցության կանխում: Գրիպի և սուր շնչառական վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելում | ՀՍՀՎ | ԻԽՀՏ | իրականացվել է |
| 11.Աշխատանքի պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ իրազեկման միջոցառման կազմակերպում և իրականացում | Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել է համապատասխան իրազեկման նյութ | Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքի իրացման ուղղությամբ գործատուների և աշխատողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | ԱԱՊՎ<br>կառուցվածքային ստորաբաժանումներ | ԻԽՀՏ | իրականացվել է |
| 12. Վարակիչ հիվանդությունների տեսանկյունից անապահով երկրներից ժամանող և այդ երկրներ մեկնող ուղևորներին սպառնացող վտանգների մասին իրազեկում, համապատասխան խորհրդատվության տրամադրում | Տեսչական մարմնի համապատասխան ստորաբաժանումների կողմից, ինչպես նաև ՍԲՀԿ-ների միջոցով իրականացվել են վարակիչ հիվանդությունների տեսանկյունից անապահով երկրներից ժամանող և այդ երկրներ մեկնող ուղևորներին սպառնացող վտանգների մասին իրազեկման և համապատասխան խորհրդատվության աշխատանքները | Կանխարգելիչ միջոցառում | կառուցվածքային ստորաբաժանումներ ՍԲՀԿ | ՀՍՀՎ | իրականացվել է |



0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ.  (374-10) 65-05-53     Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107